Երեկ հավանաբար հինգշաբթի էր,
և դու հավանաբար նորից
Վագներ էիր լսում,
այն խոնավ ու թախծոտ միստերիան՝
<<Պարսիֆալը>>,
որ ծորում էր մատներիս
եռանկյուն գաղտնիքներից,
հետո հավանաբար սուրճ էիր խմում
ու ծխում էիր:
(խցանել եմ ականջներս,
որ ծանոթ բառերից չգայթակղվեմ նորից):

Աշխարհի վերջնական ձևերը,
(իսկ վերջնական ձև ուղղակի չկա),
շարունակում են բացահայտել իրենց,
բացահայտել հավերժը:

Եթե չես ապրել, ուրեմն
մահվան սարսափն անտեղի է,

աշխարհին հոգուդ խորքի պես նայիր:

Գրկում եմ ծնկներս ամուր,
հասկանում, որ միևնույն է,
Լոուելի <<Կյանքի ուսումնասիրությունները>>
չեն փրկելու ինձ,
որ Երևանը իր հազար ութ հարյուրամյա
արդեն ճաղատացած պատմության մեջ
հազար ութ հարյուր անգամ հաստատ
տեսել է ցորենի հազար ութ հարյուր
չթաղված հատիկներ
ու երկնքի մեղրագույն աչքերում
հազար ութ հարյուր անգամ հաստատ
ինձ տեսել է մերկ՝ հայելու առջև
և օրերը,
որ հիշողությունն են Աստծո,
վերադառնում են մեզ՝
սպառված ժամանակի միջով: